Հուլիս, 2025

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԹԵՍՏ

ՀՐԱՀԱՆԳ

Ներկայացվում է քննության թեստի էլեկտրոնային բուկլետը:
Թեստի առավելագույն միավորը 70 է:
Թեստը լրացնելու համար տրվում է 4 ժամ:
Ուշադրությո՛ւն. անհասկանալի ձեռագրով աշխատանքը չի ստուգվի:

Հաջորդ էջ անցնելու և հետ դառնալու համար կարող եք օգտվել ստեղնաշարի այն կոճակներից, որոնց վրա սլաքներ են պատկերված:

Մաղթում ենք հաջողություն:

Հայոց լեզու (35 միավոր)

(1) **1. Կարդացե՛ք նախադասությունը.** *Արքայական կացարանը տխրությունից մերկացավ, և հանապազօրյա հառաչանքներին հաջորդեց խնդություն:*

Տվյալ նախադասության մեջ գործածված է՝

ա) Բարբառաբանություն:

բ) Հնաբանություն:

գ) Նորաբանություն:

դ) Օտարաբանություն:

(1) **2. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ հոմանիշներ կան:**

ա) Դեմքը պայծառացավ, և գեղանի շրթունքների վրա շողաց մի առույգ ժպիտ:

բ) Լեզուն իր հուշարձաններով անաղարտ և գրեթե անխաթար կերպով հասել է մեզ:

գ) Մի գիժ քարը գցեց ծովը, հազար խելոք չեն կարողանում հանել:

դ) Մտավորականությունը իր երկրի տերն է և նաև՝ ծառան:

(1) **3.** **Հնչյունափոխական երևույթը, երբ մի հնչյունը ազդում է մյուս հնչյունի վրա՝ ամբողջովին կամ որևէ հատկանիշով նմանեցնելով իրեն, կոչվում է.**

ա) Առնմանություն:

բ) Դրափոխություն:

գ) Համաբանություն:

դ) Տարնմանություն:

(1) **4. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ կա ուղղագրական սխալ:**

ա) Առավոտից մանր ու հաճելի անձրև էր գալիս:

բ) Բահով երկար գործ անելուց ձեռքերը ցավում էին:

գ) Երկվորիակների սերտ կապվածությունը վերափոխվում է կախվածության:

դ) Մաքրուհի մայրը թեյի բաժակը վերցրեց և սեղանից սրբեց հացի փշրանքը:

(1) **5. Ո՞ր նախադասության մեջ կա ուղղագրական սխալ:**

ա) Այդ մասին վկայում են վանքի վիմագիր արձանագրությունները:

բ) Հանկարծ դիմացից մի անծանոթ մարդ հայտնվեց:

գ) Մանուկը մեծացավ, դարձավ վայելչատես երիտասարդ:

դ) «Մեկն արհամարելի թիվ չէ», – ասում է փիլիսոփան:

(1) 6. Պարզե՛ք՝ ժամանակակից հայերենի քերականության տեսակետից թվարկված բառերից որո՞ւմ է «ք» վերջածանցը բառին տալիս հոգնակիության իմաստ:

ա) Արգելք:

բ) Ինչպիսիք:

գ) Խոսք:

դ) Ձեռք:

(1) **7. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞րն է կրավորական սեռի բայ։**

ա) Ապահովել։

բ) Դիմագրավել։

գ) Խռովել։

դ) Կողոպտվել։

(1) **8. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞ր բացատրությունն է ճիշտ:**

ա) Մակբայը ցույց է տալիս առարկայի կատարած գործողություն կամ վիճակ:

բ) Մակբայը ցույց է տալիս առարկայի քանակ և հատկանիշ:

գ) Մակբայը ցույց է տալիս գործողության հատկանիշ և հատկանիշի հատկանիշ:

դ) Մակբայը ցույց է տալիս ենթակայի կատարած գործողություն:

(1) 9. **Ո՞ր նախադասության մեջ «լավ» բառը <u>չի գործածվել</u> որպես ածական:**

ա) Աննան ավելի լավ աղջիկ է, քան Շուշանը:

բ) Լավ ընկերները միշտ ուշադիր են միմյանց նկատմամբ:

գ) Մենք շատ լավ ժամանակ անցկացրինք զբոսայգում:

դ) Նա ավելի լավ է երգում ժողովրդական երգերը:

(1) **10. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞ր նախադասության մեջ է ձայնարկությունը գործածվել որպես կոչական:**

ա) է՛հ, դու էլ ժամանակ գտար հանգստանալու:

բ) Հե՛յ, ի՞նչ ես անում այդտեղ այսպես ուշ:

գ) Պահո՛ն... – միաբերան զարմացան բոլորը:

դ) Ջա՛ն, վաղը գնում ենք տատիկին այցի:

(2) 11. **Աշակերտը գրել է.** *«Քամին ծառերի ճյուղերն իրար էր տալիս, տերևները սվսվալով քսվում էր միմյանց»:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **12. Աշակերտը գրել է.** *«Այս տարի նշում ենք մեր հայտնի գրողի հարյուր ամյա հոբելյանը»:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(4) **13. Դուք պետք է աշակերտներին բացատրեք հոդերի սահմանումը և դրանց կիրառման դեպքերը:**

I – Նշե՛ք հոդերի գործառույթներին վերաբերող երկու-երեք կանոն, որոնց պետք է տիրապետեն աշակերտները:

II – Բերե՛ք հոդերի ճիշտ կիրառության օրինակներ՝ ըստ նշված կանոնների:

(7) **14. Կարդացե՛ք Կարեն Սվասյանի «Այրված դասագիրքը» ակնարկից բերված հատվածը.**

Երբ 17-րդ դարում, նոր ժամանակաշրջանի արշալույսին փիլիսոփայորեն մտածող ուղեղներում ծագեց երեխաների դաստիարակության հարցը, պատասխանները խիստ տարբեր եղան, բայց դրանցից միայն մեկին էր վիճակված անասելի հաղթական ապագա: Անգլիացի բժիշկ և փիլիսոփա Ջոն Լոկը փորձեց մտքի մի հարվածով, ինչպես տապարով, փշրել մանկական հոգու՝ բոլորին հուզող պրոբլեմների հանգույցը: Պատասխանն այսպիսին էր. «Մանկական հոգին ճերմակ թուղթ է, մաքուր տախտակ, դատարկ շենք, որ կյանքի ընթացքում լցվում է զգացումներով ու գաղափարներով: Հոգու բարդության և հանելուկայնության մասին հին հեքիաթները պետք է հանձնել արխիվ. ոչ մի բարդություն և հանելուկայնություն այստեղ չկա, գոյություն ունի կատարյալ մաքրություն-դատարկություն, որի լրացումը լիովին կախված է դաստիարակությունից և կենսական հանգամանքներից»:

I – Ո՞րն է այս տեքստի բուն ասելիքը:

II – Ձևակերպե՛ք մեկական փաստարկ՝ մեկը տեքստում ներկայացված կարծիքը հաստատելու, մյուսը՝ հերքելու համար:

III – Շարադրե՛ք Ձեր դատողություններն այն մասին, թե որ փաստարկն է Ձեզ համար ընդունելի և ինչու:

Հաշվի՛ առեք, որ այս առաջադրանքի պատասխաններում Ձեր թույլ տված ուղղագրական, կետադրական, քերականական կամ ոճաբանական սխալի համար 1 միավոր կհանվի:

(10) **15. Կարդացե՛ք աշակերտի գրավոր աշխատանքը և հետևե՛ք հետևյալ հրահանգներին.**

I – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ I չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ(ներ)։

II – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ II չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ(ներ)։

III – 1. Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ III չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակներ։

2. Որոշե՛ք յուրաքանչյուր սխալի տեսակը (ուղղագրական, ձևաբանական, կետադրական, շարահյուսական)։

Գնահատման չափանիշներ

N	*Չափանիշներ*	*Չափանիշների պարզաբանում*	*Միավոր*
I	Դատողության հիմնավորում (փաստարկ և եզրակացություն)	ա) Դատողությունը հստակ փաստարկված է, փաստարկները հիմնավորված են համապատասխան օրինակներով: բ) Դատողությունը մասամբ է փաստարկված, հիմնավորված չէ համապատասխան օրինակներով կամ թույլ է տրված փաստացի սխալ: գ) Տեքստը ճիշտ չի հասկացվել, դատողությունը համոզիչ չէ, օրինակները նույնպես չեն համապատասխանում դատողությանը:	2 1 0
II	Բառապաշար և ոճ	ա) Միտքը ճիշտ և հստակ է ձևակերպված, ոճաբանական առումով սխալներ չկան: բ) Միտքը ճիշտ է ձևակերպված, բայց բառապաշարն աղքատ է, կամ հանդիպում են բառապաշարի հետ կապված և/կամ ոճաբանական թերություններ: գ) Միտքը հիմնականում հասկանալի է, բայց գրվածքի ոճը խրթին է, հանդիպում են բառագործածության սխալներ:	2 1 0
III	Ուղղագրություն, քերականություն, կետադրություն	ա) Այս կարգի սխալների թիվը երեքից ավելի չէ: բ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի չէ: գ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի է:	2 1 0

Աշակերտին տրված առաջադրանք.

Ժամանակակից տեխնոլոգիաները սահմանափակում են մարդուն, կորցնում նրա՝ նորը փնտրելու և բացահայտելու ցանկությունը:

Փաստարկված դատողությամբ հաստատե՛ք կամ հերքե՛ք բերված կարծիքը:

Աշակերտի շարադրությունը

Ոչ-ոքի համար գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր երևույթ կարող է ունենալ և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Մարդն աշխարհը, երևույթներն ընկալում, գիտակցական մակարդակում պրպտում է, փնտրում նորություններ, փորձում է բացահայտումներ անել, հասկանալ իր գոյության պատճառները, փոփոխություններ մտցնել իր կյանքում ու շրջապատում, տնորինել իր ճակատագիրը... Նորը բացահայտելու ցանկությունը հաճախ ըմբոստության է հանգեցնում մարդուն, սակայն առանց այդ ցանկություն չափազանց անհետաքրքիր կլիներ կյանքը: Այդ իսկ պատճառով, որքան էլ «պատժելի», առաջ շարժվելու և բացահայտումներ անելու ցանկությունը նորանոր հորիզոններ է բացում մարդկությանը...

21-րդ դարում ստեղծված տեխնոլոգիաները նույնպես մարդու այս ցանկության հետ է կապվում: Այն միտքը, որ տեխնոլոգիաները սահմանափակում են մարդուն, այդ տեխնոլոգիաներում չափից ավելի ներգրավածությունից և կախվածությունից մեզ ձերբազատելու ճիգն է, և դա բնական է: Ետդարձի ճանապարհ մենք չունենք, պարզապես պետք է հասկանանք, որ արվեստական բանականությունը և տեխնոլոգիաները ստեղծվել են մեր կյանքը հեշտացնելու համար: Եթե նկատի ունենանք նաև մարդու աստվածատուր հատկանիշը ստեղծագործելու կարողությունը, որը տեխնոլոգիաների միջոցով հրաշքներ կարող է գործել, ապա պարզ կդառնա՝ նորույթներն աշխարհը ճանաչելու բացառիկ հնարավորություններ են տալիս մեզ: Մեզ մնում է օգտվել այդ հնարավորություններից:

Հայ գրականություն (20 միավոր)

(1) 16. **Կորյունը «Վարք Մաշտոցի» ստեղծագործության մեջ գրում է.** «Իսկ երանելի Սահակը... դրանից հետո դարձյալ Եզնակի հետ միասին սկսեց և առաջվա հանկարծագյուտ շտապովի թարգմանությունները հաստատեց բերված ստույգ օրինակներով»:

Բերված հատվածում ո՞ր թարգմանության մասին է խոսքը:

ա) Ժողովների կանոններ:

բ) Շարականների ժողովածու:

գ) Սուրբ Գիրք:

դ) Տաղերի ժողովածու:

(1) **17. Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է՝** ինչո՞ւ է պատմաբանը բացասական վերաբերմունք ունեցել Պապ թագավորի նկատմամբ:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Թագավորը Հռոմի կրոնական և քաղաքական դաշնակիցն էր:

բ) Թագավորը տղամարդկանց ստիպում էր ծառայել բանակում:

գ) Թագավորը փորձում էր սահմանափակել եկեղեցու իրավունքները:

դ) Թագավորը քիչ էր մտահոգված երկրի բարեկեցության համար:

(1) **18. Աշակերտը հարցնում է՝** Ներսես Շնորհալին «Ողբ Եդեսիո» պոեմի գլխավոր նպատակը ինչպիսի՞ շեշտադրումներով է ներկայացնում:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Հեղինակը ցանկանում է ապագայի հանդեպ հավատ սերմանել իր հայրենակիցների մոտ և մխիթարել նրանց:

բ) Հեղինակը ցանկանում է Եդեսիայի ողբերգությունը նկարագրել որպես Աստծու պատիժ:

գ) Հեղինակը ցանկանում է խաչակրաց արշավանքների հաջողությունը կապել Երուսաղեմի գրավման հետ:

դ) Հեղինակը ցանկանում է փրկության գաղափարը կապել քրիստոնյա ժողովուրդների ընդհանուր պայքարի հետ:

(1) 19. **Այլ աղբյուրներին զուգահեռ, թվարկված աղբյուրներից ո՞րն է օգտագործել Մխիթար Գոշը «Դատաստանագրքի» վրա աշխատելիս։**

ա) Կոստանդին Արմենոպուլոսի «Վեցատյան»-ը։

բ) Մովսես Մարգարեի «Հնգամատյան»-ը։

գ) Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»-ը։

դ) Վախթանգ VI թագավորի «Դաստուրլամալի»-ն։

(1) 20. **Ինչի՞ մասին <u>չի գրում</u> Նահապետ Քուչակը:**

ա) Կնոջ գեղեցկության մասին:

բ) Հեղափոխության մասին:

գ) Պանդխտության մասին:

դ) Սիրո վայելքների մասին:

(1) 21. **Պարույր Սևակը ո՞ր պոեմում է աստվածաշնչյան բնաբաններ կիրառել:**

ա) «Անլռելի զանգակատուն» պոեմում:

բ) «Անհաշտ մտերմություն» պոեմում:

գ) «Երգ երգոց» պոեմում:

դ) «Ուշացած իմ սեր» պոեմում:

(1) 22. **Աշակերտը հարցնում է՝ ի՞նչ նկատի ունի Միքայել Նալբանդյանը հետևյալ բառերով.** «Ժամանակը վազում է հառաջ. ուրեմն և ժողովուրդը պիտո է վազե»:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) 19-րդ դարի ընթերցողը գեղարվեստական գրականության փոխարեն նախընտրում էր հրապարակախոսությունը:

բ) 19-րդ դարի ընթերցողը դժվարությամբ էր հարմարվում ժամանակակից մարտահրավերներին:

գ) 19-րդ դարի ընթերցողը հիացած էր գրականության ժանրերի և թեմաների բազմազանությամբ։

դ) 19-րդ դարի ընթերցողի համար գրաբարը խոսակցական լեզու չէր, բարդ էր ու անհասկանալի:

(1) **23. Ի՞նչ նկատի ունի Գաբրիել Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» պիեսի հերոսը հետևյալ արտահայտությամբ.** «Ստեփան Դանելիչը վուր կա հավիտենական զամին ե տալի միզ աստուձ»:

ա) Աստված երբեմն լավ մարդուն որպես պաշտպան ուղարկում է կարիքավորի մոտ:

բ) Լավ խորհրդատուն և հուսալի հենարանը մարդու հանգստության գրավականներն են:

գ) Նեղ օրերին մարդուն մխիթարելու համար միշտ ընկեր է պետք:

դ) Փողն ու հարստությունը ապահով ապագայի գրավականներն են:

(1) **24. Նար-Դոսի «Հոպոպ» ստեղծագործության մեջ գլխավոր հերոսի կռվարար լինելու հանգամանքը ինչի՞ հետ է կապվում:**

ա) Հերոսի՝ բնավորությամբ «հոտած» մարդ լինելու հետ:

բ) Հերոսի՝ իր բռնած գործում հաջողակ չլինելու հետ:

գ) Հերոսի՝ լավ ապրուստի համար եկամուտ չունենալու հետ:

դ) Հերոսի՝ հարևանների ծաղրանքը չհանդուրժելու հետ:

(1) **25. Մարո Մարգարյանի «Փշատենի» բանաստեղծության մէջ՝**

ա) Փշատենու պատկերը գարնան խորհրդանիշն է:

բ) Փշատենու պատկերը հայրենիքի խորհրդանիշն է:

գ) Փշատենու պատկերով ճշմարիտ ընկերության գաղափարն է տրվում:

դ) Փշատենու պատկերով ներկայացվում է բնության սերը:

(1) **26. Համո Սահյանի ո՞ր բանաստեղծության մեջ է պապի կերպարը հանդես գալիս որպես կորուսյալ մանկության, անհոգ կյանքի, կարոտի և տխրության խորհրդանիշ:**

ա) «Անունդ տալիս»:

բ) «Նեղվում եմ»:

գ) «Վշտացել եմ ամեն ինչից»:

դ) «Օրը մթնեց»:

(1) **27. Ինչպիսի՞ հատկանիշներով է օժտված Լևոն Խեչոյանի «Զանգը» պատմվածքի գլխավոր հերոսը։**

ա) Նա անհոգ և զվարճասեր երիտասարդ է։

բ) Նա արտերկրից եկած անգրագետ ուսուցիչ է։

գ) Նա բարությունը և գեղեցկությունը մարմնավորող կին է։

դ) Նա հարուստ, ամբարտավան ընտանիքի ներկայացուցիչ է։

(1) 28. Ո՞ր ստեղծագործությունն ուսումնասիրելիս կվկայակոչեք Եղիշեի՝ *«Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ»* արտահայտությունը հայրենասեր հայ կանանց բնութագրելու համար:

ա) Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմը:

բ) Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը:

գ) Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը:

դ) Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:

(1) **29. Ըստ «Սասունցի Դավիթ» էպոսի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Մհերը և Մըսրա Մելիքը:**

ա) Ով հաղթի մենամարտում, նա կդառնա Մըսրա տիրակալ:

բ) Ով հաղթի մենամարտում, նա կդառնա Սասնա տիրակալ:

գ) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն կանի մյուսը:

դ) Ով սպանի Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ կվճարի:

(1) **30. Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը սկսվում է՝**

ա) Ալպիական մանուշակների նկարագրությամբ:

բ) Բակուր իշխանի դամբարանի նկարագրությամբ:

գ) Բասուտա գետի նկարագրությամբ:

դ) Կաքավաբերդի նկարագրությամբ:

(1) **31. Ստեփան Զորյանի «Շաքարաման» պատմվածքի հերոսը ինչո՞ւ օգնություն չխնդրեց խանութպանից։**

ա) Երիտասարդը անվստահություն և անտարբերություն զգաց խանութպանի պահվածքում:

բ) Երիտասարդը հիշեց, որ դեռ չի վճարել խանութպանի հին պարտքը։

գ) Խանութպանը մեղադրել էր բանտից նոր ազատված երիտասարդին գողության մեջ:

դ) Խանութպանը չկարողացավ ճանաչել երիտասարդին, որն իր ընկերոջ տղան էր։

(1) 32. **Ո՞ր հեղինակի ստեղծագործության հետ զուգահեռ կանցկացնեք Նաղաշ Հովնաթանի «Տաղ սիրո» բանաստեղծությունից բերված հատվածը բացատրելիս.**

«Ուստի՞ կու գաս, քաղցր բլբուլ,
Քեզի բարև, ես քեզ եմ ղուլ,
Լեզուդ շարբաթ, սազդ սմբուլ,
Քաղցր լեզվովդ ջուր տուր ինձի»:

ա) Գրիգոր Նարեկացու:

բ) Նահապետ Քուչակի:

գ) Սայաթ-Նովայի:

դ) Ֆրիկի:

(1) **33. Գեղարվեստական ո՞ր միջոցն է կիրառված Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմից բերված հատվածում.**

«Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին՝
Կապույտ երկնքի խորությամբ արբած։
Թարմ, թեթև էր մեր ճամփորդի հոգին,
Ուրախ էինք մենք և մեր սիրտը՝ բաց»։

ա) Բաղաձայնույթ։

բ) Համեմատություն։

գ) Մակդիր։

դ) Չափազանցություն։

(1) **34. Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն» նորավեպն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է՝** ինչո՞ւ է նորավեպի գլխավոր հերոս Զաբուղոնը բանտից փախչելուց հետո կրկին բանտ վերադառնում:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Ազատության մեջ ապրելը Զաբուղոնի համար դառնում է անիմաստ:

բ) Զաբուղոնը ցանկանում է վրեժ լուծել իր սիրած աղջկաց:

գ) Կատաղած Զաբուղոնը ցանկանում է սպանել Վասիլիկի նոր սիրեկանին:

դ) Վասիլիկը ոստիկանություն է կանչում Զաբուղոնին բռնելու համար:

(1) **35. Ըստ Ռաֆֆու «Սամվել» վեպի՝ ո՞ր բնութագիրն է սխալ Մերուժան Արծրունու դեպքում:**

ա) Թեև դավաճանը կուրացած է հայրենասեր ուժերի դեմ տածած իր ատելությունից, բայց կռվի դաշտում հրաժարվում է մոր և նրա զորախմբի դեմ կռվելուց:

բ) Թեև Մերուժան Արծրունին այդպես էլ հետ չի կանգնում իր ընտրած խոտոր ուղուց, բայց նա ստիպված է լինում փախչել ճակատամարտից:

գ) Մերուժանը դրամատիկ կերպար է, որը տառապագին մտորումներով փորձում է արդարացնել իր արարքը:

դ) Նա կշտամբում է իրեն՝ կամքի թուլություն ցուցաբերելու և Որմիզդուխտի նկատմամբ սերը հաղթահարել չկարողանալու համար:

Գեղարվեստական տեքստի ըմբռնում (15 միավոր)

Ուշադի՛ր կարդացեք Վահան Թոթովենցի «Հրկիզված թղթեր» ստեղծագործությունից բերված հատվածը.

Բարձրագույն ուսումնական հիմնարկության վարչությունը որոշեց պրոֆեսորներից մեկին գործուղել արտասահման վեց ամսով, հատկապես Փարիզ, և վարչության նիստում գրեթե ոչ մի առարկություն չեղավ, երբ հիմնարկության դիրեկտորն առաջարկեց պրոֆ. Մելիք-Անդրեասյանի թեկնածությունը։ Ամբողջ հիմնարկության մեջ պրոֆ. Մելիք-Անդրեասյանն այն անձնավորություններից մեկն էր, որ երկրի խորհրդայնացման գրեթե առաջին իսկ օրերից անվերապահ կերպով կանգնած էր խորհրդային պլատֆորմի վրա, և վարչության ոչ մի անդամը չէր կարող որևէ լուրջ առարկություն հարուցել նրա թեկնածության դեմ։ Բայց պրոֆ. Մելիք-Անդրեասյանի համար այս որոշումը գրեթե անակնկալ էր, որովհետև արտասահմանյան գործուղման մասին ոչ մի խոսակցություն չէր եղել նախապես։

Հիմնարկության դիրեկտորը երբ պրոֆեսոր Մելիք-Անդրեասյանին հաղորդեց այս որոշումը, վերջինիս գլխում ծագեց անմիջական կերպով մի լուսավոր միտք. գնալ արտասահման և չվերադառնալ, վերջ տալ այն դաժան, մաշեցնող երկվությանը, որ գոյություն ուներ իր ներաշխարհում, մանավանդ որ վերջերս պայքարն ավելի էր անողոք դառնում իր մեջ, որովհետև նորն իր մեջ բավականին աճել էր՝ վճռական ճակատամարտ սկսելու հնի դեմ։ Նորը նրա մեջ աճում էր դանդաղ, բայց հաստատուն արմատներով, աճում էր ինքնիրեն, իսկ հնին օգնում էր ինքը, որ տեղի չտա։ Ինչքան հինը տեղի էր տալիս, այնքան թախիծ և մորմոք էր կուտակվում նրա մեջ. ուզենալով հաղթահարել արտաքին մռայլությունը՝ պրոֆեսորը բազմապատիկ ուժ էր սպառում, մի ուժ, որ եթե գործադրեր նորի արագ որդեգրման համար, կհասներ հաղթական վախճանների։ Եվ հանկարծ, երբ նրա առաջ բացվեց արտասահմանի ճանապարհը, նա գտավ, որ դա ճակատագրական էր և եկել էր փրկելու իրեն, փրկելու իր հոգու թշվառությունը։

– Անշուշտ Ելենա Բեգլարովնայի հետ կարող եմ մեկնել, – ասաց նա հիմնարկության դիրեկտորին։

– Գործուղումը միայն մի անձնավորության համար է, պրոֆեսոր, այնուամենայնիվ կարելի է դիմել, սկզբունքորեն ես դեմ չեմ Ելենա Բեգլարովնայի հետ գնալու գաղափարին, – ասաց դիրեկտորը։

– Ումի՞ց է կախված այդ, – հարցրեց պրոֆեսորը։

– Կառավարությունից։

Խոսակցությունը երկար չտևեց։ Մելիք-Անդրեասյանը դուրս եկավ դիրեկտորի կաբինետից և ճգնեց ամփոփել մտքերը։

«Եթե Ելենա Բեգլարովնայի հետ գնամ, – մտածեց նա, – չեմ վերադառնա, իսկ եթե մենա՞կ մեկնեմ»։

Պրոֆեսորը չկարողացավ պատասխանել։ Ինչպե՞ս կլիներ կնոջ դրությունը, եթե ինքը դավաճաներ Խորհուրդների իշխանությանը։ Ինչպե՞ս կնայեին մարդիկ իր վրա կնոջը լքելու համար, արդյոք կկարողանա՞ր հաղթահարել խղճի խայթը, Ելենա Բեգլարովնան չէ՞ր թքի իր վրա, չէ՞ր խայտառակվի ինքը ողջ պատմության մեջ։

Չկարողանալով ոչ մի եզրակացության հասնել, ուղիղ տուն չգնաց, քայլեց մի փողոցով դեպի քաղաքի կենտրոնը։ Մտավ մի խանութ՝ պապիրոս վերցնելու։ Չկար։

– Ինչո՞ւ չկա, – սրտնեղած հարցրեց նա։

– Եսի՞մ, չկա, ինտելիգենտ մարդ ես, հասկացիր, – կոպիտ պատասխանեց կոոպերատիվի ծառայողը։

Պրոֆեսորը դուրս եկավ՝ սաստիկ ջղայնացած։ Մտավ մի մասնավոր խանութ. պապիրոս կար, բայց երեք անգամ թանկացած, վերցրեց և մտքում հայհոյեց։

– Սա ի՞նչ բան էր, գոնե արտասահմանում ուզածդ կլինի։ Դասախոսիր չորս ժամ, հոգնիր, չարչարվիր, տարիների սովորածդ վերագնահատիր, փոխիր, զոռով հավատա և պապիրոս էլ չկա ծխելու, ջղերը հանգստացնելու, – ասաց նա մտքում և կրկնեց միևնույն բառերը մի քանի անգամ։

Մինչև տուն վերադարձը պրոֆեսորն արտասահմանից չվերադառնալու գրեթե վճռական որոշում տվեց, բայց վախենում էր պարզ կերպով այդ ասել մտքում։ Երբ նա հայտնեց կնոջը հիմնարկության որոշումը, կինը բացականչեց.

– Միասին։

– Ախորժակդ մի սրի, միայն ինձ են ուղարկում, բայց ես խնդրեցի քեզ ևս թույլ տան։

– Եթե միասին գնանք, էլ չենք վերադառնա, – պարզապես հայտարարեց Ելենա Բեգլարովնան։

– Ես զղջացի, որ քեզ հաղորդեցի այս որոշումը, – ասաց պրոֆեսորը։

– Ինչո՞ւ։

– Այդ միտքը կարող ես դուրսն էլ հայտնել, և ահա ոչ միայն քո գործը կփչանա, այլև իմը։

– Գի՞ժ եմ, որ դուրսն էլ ասեմ, ոչ ոք չկա այստեղ, երկուսս ենք։

– Վահրամին էլ ոչ մի խոսք այդ մասին, խելոք և լավ տղա է, բայց խորամանկ է։

Ելենա Բեգլարովնան չդադարեց խոսելուց.

– Ուղղակի բախտ է սա, անակնկալ բախտ։ Դու կարծում ես չե՞նք կարող լավ ապրել արտասահմանում, փառավո՛ր կապրենք, ես էլ կաշխատեմ, երկու հոգի ենք։

– Մտածում եմ Արուսյակի և Բաբկենի մասին։

– Արտասահմանից կօգնենք, – պատասխանեց Ելենա Բեգլարովնան մի տեսակ դժգոհ, որ արտասահման գնալու ուրախությունը պրոֆեսորի էմիգրանտ դարձած եղբոր կինը և որդին պղտորում էին։

– Չէ՛։ Արտասահմանից չենք կարող օգնել նրանց, տեսնո՞ւմ ես, Հարությունը չի կարող, մի մոռանա, որ եթե չվերադառնանք, մենք ևս կդառնանք էմիգրանտ, և վատ տեսակի էմիգրանտ. Հարությունն իբրև թշնամի փախավ, մենք մեկնում ենք իբրև բարեկամներ, և ահա դավաճաններ։

– Կատարյալ Արևմտյան Եվրոպայի պատմություն դարձրիր։ Կգնանք, ուրիշ ոչինչ։ Բաբկենը կոմսոմոլիստ է, ինքն էլ կապրի, մորն էլ կապրեցնի, ճիշտն ասած՝ դու շատ ես երես տալիս նրանց։

Պրոֆեսորը խեթ նայեց կնոջը, բայց կինը չազդվեց, արտասահման գնալու շատ մոտիկ պատկերը նրան հասցրել էր բուռն խայտանքի։

– Հավանական չէ, որ միասին մեկնենք, – ասաց պրոֆեսորը, տեսնելով Ելենա Բեգլարովնայի գլխապտույտն ուրախությունից։

– Իսկ դու մենակ կգնա՞ս, – հարցրեց կինը լրջացած և հրճվանքը կորցրած։

– Վեց ամսով, ինչո՞ւ չգնամ։

– Բայց…

– Վերջապես, հրաժարվելն էլ կարող է վարկաբեկիչ լինել։

– Ես չեմ ուզում, որ հրաժարվես, բայց մեր ամուսնության առաջին օրից մինչև հիմա մենք երբեք իրարից չենք բաժանվել, – շշնջաց Ելենա Բեգլարովնան, և պրոֆեսորը տեսավ նրա աչքերում արցունքի կաթիլներ։

– Ոչինչ, կպատահի, - ասաց պրոֆեսորը և գրկեց նրան։

Ելենա Բեգլարովնան ամուսնու միրուքն իր փափուկ երեսներին դիպչելուց անսահման հեշտանք զգաց։ Նրա հավանական մեկնումը և իր հավանական մնալը թախիծով և քնքշությամբ լցրեց քառասունը նոր թևակոխած կնոջը։ Ելենա Բեգլարովնան երբեք չէր կասկածում, որ եթե պրոֆեսորը մենակ գնար, չէր վերադառնա, բայց նրա մտքից ուրիշ չար բաներ էին անցնում. մահ, պատերազմ, հանկարծ իրարից կտրվել ակամա։ Նա տեսել էր պատերազմը և գիտեր հարյուրավոր դեպքեր, որ իրար չափազանց սիրող ամուսիններ բաժանվել էին իրարից, երկար ժամանակի բացակայությունը աճեցրել էր յուրաքանչյուրի մեջ տարբեր զգացումներ, սկզբնական շրջանում՝ օտարոտի, բայց հետզհետե դարձել էին ընտանի և անխուսափելի։

… … …

– Ես պետք է վերադառնամ, պետք է անպայման վերադառնամ, ես չեմ կարող բաժանել ինձ մարդկության լավագույն մասից, չեմ կարող բաժանվել այն կուլտուրայից, որ ամբողջովին հագեցած է բարձր գաղափարականությամբ։

Այս որոշումը տալուց հետո՝ պրոֆ. Մելիք-Անդրեասյանն ազատվեց ծանր մի կոշմարից։

ՀՐԱՀԱՆԳ

Առաջադրանքը կատարելու համար ուշադի՛ր կարդացեք տեքստը: Հարցերին սկսե՛ք պատասխանել այն ժամանակ, երբ տեքստի բովանդակությունն ամբողջովին հասկանալի կլինի:

Տրված պատասխաններից ընտրե՛ք միայն մեկ պատասխան և պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում նշե՛ք «X» նշանով:

(1) 36. **Ի՞նչ չափանիշներով է ուսումնական հիմնարկության վարչությունն ընտրել արտասահման գործուղվող անձին:**

ա) Նա աչքի էր ընկնում իր խորամտությամբ:

բ) Նա դրան արժանի էր իր ընտանեկան ծագմամբ:

գ) Նա ի սկզբանե կողմ էր խորհրդային իշխանությանը:

դ) Նա վայելում էր դիրեկտորի անձնական համակրանքը:

(1) **37. Ինչո՞ւ Մելիք-Անդրեասյանի մտքում ծագեց արտասահմանում մնալու գաղափարը:**

ա) Նա վախենում էր Խորհրդային Միության օրենքներից:

բ) Նա ցանկանում էր հասնել մեծ հաջողությունների:

գ) Նա ուզում էր արտասահման տեղափոխվելով բաժանվել կնոջից:

դ) Նրան տանջում էին «հնի» ու «նորի» պայքարի հետ կապված մտքերը:

(1) **38. Ի՞նչ հնարավորություն էր տալիս Մելիք-Անդրեասյանին արտասահման գործուղումը:**

ա) Հարազատներին օգնելու:

բ) Հոգևոր ճգնաժամից դուրս գալու:

գ) Մասնագիտական կատարելագործման:

դ) Նյութական վիճակի բարելավման:

(1) **39. Ո՞վ պետք է որոշեր պրոֆեսորի՝ կնոջ հետ արտասահման մեկնելու հարցը:**

ա) Ինքը՝պրոֆեսորը:

բ) Հիմնարկության դիրեկտորը:

գ) Պրոֆեսորի կինը:

դ) Սովետական իշխանությունը:

(1) 40. **Մտքում արտասահմանում մնալու որոշում ընդունելուց հետո ինչո՞ւ պրոֆեսորը ուսումնարանից անմիջապես տուն չգնաց:**

ա) Որովհետև նա իրեն անարժան էր համարում իր նկատմամբ դրսևորած վստահությանը:

բ) Որովհետև նա հոգնել էր և ցրվելու համար ցանկանում էր քայլել փողոցներով:

գ) Որովհետև նա տպավորվել էր դիրեկտորի առաջարկից և շփոթված էր:

դ) Որովհետև որոշման հետ կապված իրարամերժ մտքերը հանգիստ չէին թողնում նրան:

(1) **41. Ո՞ր նախադասությունն է ցույց տալիս, որ պրոֆեսորը հոգնել էր այն իրականությունից, որում ապրում էր:**

ա) «Ես զղջացի, որ քեզ հաղորդեցի այս որոշումը»:

բ) «Մտավ մի մասնավոր խանութ. պապիրոս կար, բայց երեք անգամ թանկացած»:

գ) «Չկարողանալով ոչ մի եզրակացության հասնել, ուղիղ տուն չգնաց»:

դ) «Սա ի՞նչ բան էր, գոնե արտասահմանում ուզածդ կլինի»:

(1) **42. Տեքստի համաձայն՝ ի՞նչ է նշանակում «վատ էմիգրանտ»:**

ա) Մարդ, ով դավաճանում է խորհրդային իշխանությանը:

բ) Մարդ, ով իր հարազատներին անուշադրության է մատնում:

գ) Մարդ, ով խորհրդային իշխանության բարեկամն է:

դ) Մարդ, ով չի կարող կատարել իր ստանձնած պարտավորությունները:

(1) **43. Ո՞ր արտահայտության մեջ է հեղինակը դիմում գեղարվեստական խոսքի միջոցի:**

ա) «Ելենա Բեգլարովնան չդադարեց խոսելուց»:

բ) «Հարությունն իբրև թշնամի փախավ»:

գ) «Հրաժարվելն էլ կարող է վարկաբեկիչ լինել»:

դ) «Քայլեց մի փողոցով դեպի քաղաքի կենտրոնը»:

(1) **44. Տեքստի վերջին պարբերության մեջ Ելենա Բեգլարովնան՝**

ա) Անհանգստանում է ամուսնու համար:

բ) Անտարբեր կին է:

գ) Խանդոտ կին է:

դ) Վախենում է ամուսնուց բաժանվելուց:

(1) **45. Ըստ տրված հատվածի՝ ինչպիսի՞ անձնավորություն է պրոֆեսորը.**

ա) Եսամոլ անձնավորություն, ով միայն իր ապագա հաջողությունների մասին է մտածում:

բ) Հայրենասեր անձնավորություն, ով ոգեշնչված է հայրենիքի հետ կապված վեհ գաղափարներով:

գ) Հեռատես անձնավորություն, ով վերլուծում է բոլոր հնարավոր վտանգները:

դ) Շրջապատի հարգանքը վաստակած անձնավորություն, ով հպարտ է իր հանդեպ դրսևորված վստահությամբ:

(5) **46. Դատողությո՛ւն արեք տեքստի բուն ասելիքի շուրջ և հիմնավորե՛ք համապատասխան փաստարկներով:**

Նկատի՛ ունեցեք, որ 50 բառից պակաս պատասխանը չի ստուգվի: